# Որակի ապահովման շրջանակ

Թվինինգ Հայաստան, 2016թ. օգոստոսի 23-26
Բաղադրիչ 1. Վիճակագրական տեղեկատվության տարածման համակարգեր
Գործողություն 1.7. Որակի ապահովում

Կարին Բլիքս, որակի համակարգող,  Դանիայի վիճակագրություն
kwb@dst.dk

STATISTICS DENMARK

# Ինչու՞ ենք այստեղ:

- Որովհետև բոլոր լավ որոշումները հիմնված են փաստերի վրա
- Ապահովում են հասարակության մասին հիմնական փաստերը, այն է՝ համընդհանուր հղման կետ
- Ժողովրդավարության և տնտեսության համար
- Փարոս տեղեկատվության ծովում



# Պաշտոնական վիճակագրական կազմապերպություններն ապահովում են հիմք տեղեկացված որոշումների կայացման համար.

- Կառավարության
- Հետազոտողների
- Կազմակերպությունների
- Քաղաքացիների
- Միջազգային կազմակերպությունների կողմից

# Ի՞նչ է **որակը** պաշտոնական վիճակագրությունում:

- Լա՞վ կամ վատ որակ
- Վստահությունն է բանալին
- ՄԱԿ-ի հիմնարար սկզբունքները պաշտոնական վիճակագրության մասին (1993; 2014)
- Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգիրքը (2005; 2011)
- ԵՄ որակի ապահովման շրջանակ (2013)
- ՏՀԶԿ որակի շրջանակ (2012)

# Վիճակագրական համագործակցությունը ԵՄ-ում

- Դանիան՝ ԵՄ անդամ 1972-ից ի վեր
  - Տեղաշարժ համընդհանուր հետազոտությունների ուղղությամբ համագործակցությունից
  - Դեպի համընդհանուր վիճակագրական համակարգերի համագործակցությունից
- Համագործակցության գործիքներ
  - Խորհրդարանի և խորհրդի կանոնակարգեր
  - Հանձնաժողովներ, աշխատանքային խմբեր Եվրոստատում





# Որակի շրջանակ

- Եվրոպական շրջանակ.
  - Եվրոպական վիճակագրության փորձառությունների օրենսգիրք (CoP)
  - Եվրոպական վիճակագրական համակարգի (ESS) որակի ապահովման շրջանակ (QAF)
  - Փորձագիտական գնահատումներ

- Տեղական շրջանակ
  - Որակի մասին իրազեկ լինելը վիճակագրության տարածման մեջ
    - Վիճակագրության փաստաթղթավորում
    - Այլ մեթատվյալներ
    - Սպառողների ներգրավվածություն
  - Որակի մասին իրազեկ լինելը վիճակագրության արտադրման մեջ
    - ԵՄ համագործակցություն
    - Խորհրդատվություն մեթոդաբանական բաժնից
    - Ադմինիստրատիվ ռեգիստրների լայն օգտագործում
    - Որակի աուդիտ

# Եվրոպական շրջանակ՝ Փորձառության օրենսգիրք (CoP)

- Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգիրք
  - Առաջին անգամ հրապարակվել է 2005-ին և թարմացվել՝ 2011-ին
- ՄԱԿ վիճակագրության հիմնարար սկզբունքներ
  - Հրապարակված 1994-ին
- 15 սկզբունքներ
  - Ինստիտուցիոնալ միջավայր
  - Վիճակագրական գործընթացներ
  - Վիճակագրական արդյունք
- Յուրաքանչյուր սկզբունքի ուղղությամբ լավ փորձառությունների համար ցուցանիշների խումբ



# Եվրոպական վիճակագրության փորձառությունների օրենսգիրք

- 15 սկզբունքներ
- 82 ցուցանիշներ, որոնք մշտադիտարկում են Եվրոպական վիճակագրական համակարգերը (ESS)

1. Ինստիտուցիոնալ միջավայր



2. Վիճակագրական գործընթացներ




3. Վիճագրական արդյունք



# Ինստիտուցիոնալ միջավայր

1. Մասնագիտական անկախություն
2. Տվյալների հավաքագրման մանդատ
   - Այդ թվում և վարչական տվյալների
1. Ռեսուրսների համարժեքություն



1. Որակի հանձնառություն
2. Վիճակագրական գաղտնիություն
3. Անաչառություն և օբյեկտիվություն

# ....որակի մասին

- **Որակ 4. Հանձնառություն որակին**
  - Վիճակագրական հաստատություններն ունեն որակի հանձնառություն: Նրանք կանոնավոր կերպով նույնականացնում են ուժեղ և թույլ կողմերը շարունակաբար բարելավելու գործընթացի և արտադրանքի որակը:

    - **Ցուցանիշ 4.1.** Որակի քաղաքականությունը սահմանված է և դարձված հասանելի հանրությանը. Առկա են կազմակերպության կառուցվածք և գործիքներ որակի կառավարման հետ աշխատելու համար:
    - **Ցուցանիշ 4.2.** Առկա են ընթացակարգեր պլանավորելու և մշտադիտարկելու համար վիճակագրական արտադրման գործընթացը
    - **Ցուցանիշ 4.3.** Արտադրանքի որակը կանոնավոր կերպով մշտադիտարկվում է, գնահատվում հնարավոր փոխզիջումների առնչությամբ, և զեկուցվում համաձայն եվրոպական վիճակագրության որակի չափանիշի,
    - **Ցուցանիշ 4.4.** Հիմնական վիճակագրական արդյունքների կանոնավոր և մանրամասն գնահատում նաև օգտագործելով արտաքին փորձագետների, եթե դա նպատակային է

    - http://dst.dk/en/OmDS/strategi-og-kvalitet/kvalitetspolitik

# Վիճակագրական գործընթացներ

7. Հիմնավորված մեթոդաբանություն
    - Միջազգային ստանդարտներ, ուղեցույցներ, և լավ փորձառություններ
    - Ստանդարտ հասկացություններ, սահմանումներ և դասակարգիչներ




8. Պատշաճ վիճակագրական ընթացակարգեր
9. Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության չափավորություն
10. Ծախսարդյունավետություն

# Վիճակագրական արդյունք

11. Արդիականություն
12. Ճշգրտություն և հուսալիություն
13. Յուրաժամանակություն և ճշտապահություն
14. Փոխկապակցվածություն և համադրելիություն
15. Մատչելիություն և պարզություն



# Որակի հասկացություն

**Գործընթացների որակ.**

Վիճակագրական հասկացություններ

Աղբյուրներ

Ռեսպոնդենտների/տվյալները

Տիրապետողների հետ կապ

Ընտրանքի ձևավորում

Չափման գործընթաց

Տվյալների հավաքագրում

Խմբագրում

Գնահատում

Ագրեգացում

Տպագրում և տարածում

Մուտքագրում StatBank

Փաստաթղթավորում

**Բովանդակության որակ**

*Արդիական*

*Ճշգրիտ և հուսալի*

*Ցուրաժամանակ և ճշտապահ*

*Փոխկապակցված և համադրելի*

*Մատչելի և պարզ*

*Փոխանցելի*

*Ծախսարդյունավետ*

**Որակ = Օգտագործմանը հարմար**

# Որակի ապահովման շրջանակ (QAF)

- QAF-ը մշակվել է՝ օժանդակելու CoP-ի իրականացմանը
- QAF հնարավոր գործողություններով, մեթոդներով և գործիքներով օգնել CoP-ի սկզբունքներով նախանշված նպատակներին հասնելուն
- Տարբերակվել են նախաձեռնություններ ինստիտուցիոնալ մակարդակով և անհատական վիճակագրության մակարդակով
- Ոչ բոլոր 15 սկզբունքներն են վերաբերում
  - 4 որակի հանձնառությանը
  - Վիճակագրական գործընթացների համար սկզբունքներին
  - Վիճակագրական արդյունքի համար սկզբունքներին



# 2005/6 և 20014/15 փորձագիտական գնահատումները

- Իրականացվեցին գնահատելու CoP պահանջներին բավարարումը
- Հզորացնելու ESS -ի հուսալիությունը և կարողությունը
- Գործընթացն սկսվում է ինքնագնահատման ձևաթղթից (350 հարց) CoP և QAF հիման վրա
- Սա իրականացվում է 3 փորձագետների 5-օրյա այցելությամբ, որտեղ ընդգրկված են սպառողներ և տվյալներ տրամադրողներ
- Գնահատման զեկույցը տրամադրվում է փորձագետների խմբի կողմից ԱՎԻ-ի կողմից մեկնաբանություններով
- ԱՎԻ-ն ձևակերպում է մի շարք բարելավման գործողություններ զեկույցի հիման վրա
- Եվրոստատը ապահովվում է համապարփակ զեկույց եվրոպական խորհրդարանին և ECOFIN-խորհրդին

STATISTICS DENMARK

# Տեղական շրջանակ. Որակի աշխատանքի կազմակերպում

- Ավանդաբար որակի համար պատասխանատվությունը ապակենտրոնացված է եղել
- 2013թ.-ից ի վեր ստեղծվել է որակի հարցերով վերահսկող խումբ
- 1999թ.-ից ի վեր ստեղծվել է մեթոդաբանական հարցերով վերահսկող խումբ
- 2015թ.-ից ի վեր սա փոխարինվել է որակի մեթատվյալների և վիճակագրական մեթոդների գծով տնօրենների խմբով
- Սույն խմբի ներքո կան երեք աշխատանքային խմբեր

# Պատասխանատվություններ. կազմակերպություն

**Որակի, մեթատվյալների և վիճակագրական մեթոդների հանձնառություն**

- Ռազմավարություն
- Սկզբունքներ
- Որոշված պլաններ

**Որակի ԱԽ**

- Որակի համակարգող
- Ուղեցույցներ
- Գործիքներ
- Օգնություն և խորհրդատվություն
- Դանիայի վիճակագրության որակի վերահսկողություն
- Որակի աուդիտներ

**ԱԽ մեթատվյալների գծով**

- Ուղեցույց
- Գործիքներ
- Դասընթացներ s
- Օգնություն և խորհուրդ

**Մեթոդների գծով ԱԽ**

- Ուղեցույց
- Գործիքներ
- Դասընթացներ s
- Օգնություն և խորհուրդ

**Թեմատիկ բաժիններ**

- Պատասխանատու են գործընթացի և արդյունքի համար
- Հետևում են ուղեցույցներին և խորհրդատվությանը

# Որակի համակարգող

- Նոր պաշտոն 2014թ. սեպտեմբերին
- Աշխատանքի նպատակը
  - Տալ վիճակագրության սպառողներին թիրախային աջակցություն իրենց կողմից վիճակագրության օգտագործման հարցում
  - Բովանդակության փաստաթղթավորումը և որակը էական են
  - Ներքին գործընթացները պետք է օգնեն սրան

- Դանիայի վիճակագրության գործընթացային մոդելի մշակում և իրականացում
- Որակի հռչակագրերի վերանայման համակարգող
- Որակի հռչակագրերի բովանդակության վերանայում
- Կազմակերպել և համակարգել վիճակագրության ոլորտների գործընթացների սիստեմատիկ գնահատումը
- Մնալ միևնույն մակարդակի վրա վիճակագրության որակի վերաբերյալ միջազգային աշխատանքի հետ

# Վիճակագրական համակարգ

- Վիճակագրական ենթակառուցվածք
  - Հիմնական ռեգիստրներ
  - Ընդհանուր դասակարգիչներ
  - Ընդհանուր վիճակագրական մեթոդներ և գործիքներ
  - Տարածում
  - Մեթատվյալներ
  - և այլն
- Վիճակագրական ներդրում
  - Հետազոտություններ
  - Վարչական աղբյուրներ
- Վիճակագրական արդյունքներ
  - Տվյալների բազա
  - Կայք-էջ
  - Միջազգային կազմակերպությունների հաշվետվություններ



# Մեթատվյալների կառավարում



# Վիճակագրության արտադրում

- Վիճակագրության արտադրումը հասարակության մեջ որևէ երևույթի նկարագրումն է
- և ոչ թե ցանկացած երևույթի, այլ ինչ-որ կարևոր երևույթների հասարակության մեջ, որոնց մասին ընդ որում սպառողները տեղեկություն են որոնում
    - Բնակչություն
    - Կրթություն
    - Տնտեսություն
    - և այլն
    - Շվեդ փորձագետ Բո Սունդգրենը պատկերազարդում է պատրաստել "*Վիճակագրական Համակարգեր. Որոշ հիմունքներ*"-ում

## ”Օբյեկտիվ” իրականություն

(իդեալական) վիճակագրական բնութագրիչներ . ինչի մասին ենք տեղեկություններ որոնում

- (իդեալական) բնակչություն
- (իդեալական) փոփոխականներ
- (իրական) արժեքներ

## Կոնցեպտուալիզացված իրականություն

Իրականություն, ինչպես այն ընկալվում է և գործարկվում մասնագետների կողմից

Վիճակագրական թիրախ բնութագրիչներ

- Թիրախ բնակչություն
- Փոփոխականներ, որոնք կարող են չափվել
- Արժեքներ, որոնք կարող են լինել չափեր

## Իրականություն, ինչպես այն ներկայացված է տվյալներով

Իրականությունը . ինչպես այն ընկալվում է ռեսպոնդենտների կողմից և ինչպես այն ներկայացվում է տվյալներով

Դիտարկվող օբյեկտի բնութագրիչները

- Դիտարկվող օբյեկտներ
- Դիտարկվող փոփոխականներ
- Դիտարկվոր արժեքներ

## Իրականության մասին վիճակագրություն, ինչպես այն մեկնաբանվում է սպառողների կողմից

Իրականություն, ինչպես այն ընկալվում է սպառողների կողմից տվյալները մեկնաբանելիս

- Մեկնաբանված վիճակագրություն

**Անհամաձայնություն**

- Ընդգրկվածություն (առաջին տեսակ)
- Ընտրանք
- Փոփոխականների գործառնական սահմանումը շեղվում է իդեալական սահմանումներից

**Անհամաձայնություն**

- Ընդգրկվածություն (երկրորդ տեսակ)
- Ռեսպոնդենտներին չի կարելի գտնել
- Ռեսպոնդենտները հրաժարվում են պատասխանել
- Ռեսպոնդենտները թյուրմեկնաբանություն են տալիս
- Ռեսպոնդենտները սխալներ են անում (գիտակցաբար կամ ենթագիտակցաբար)

**Անհամաձայնություն**

- Շրջանակները/հղումները տարբեր են սպառողից սպառող, ռեսպոնդենտից ռեսպոնդենտ
- Վիճակագրական մեթոդների ընկալում

Բո Սունդգրենի կողմից. Վիճակագրական համակարգեր, հիմունքներ (2004)

# Որակի զեկուցում սպառողներին. Վիճակագրության փաստաթղթավորում

- Օգնում է սպառողներին հասկանալ վիճակագրությունը՝ տալով նրանց տեղեկություն աշխատանքի շրջանակի մասին,
- Վիճակագրության բովանդակության բացատրություն
  - Պատմություն
  - Վիճակագրության նպատակ
  - Բովանդակություն՝ բնակչություն, փոփոխականներ և այլն
- Որակ= օգտագործման հարմարություն
- Բովանդակության որակ.
  - Նպատակայնություն, ճշգրտություն և հուսալիություն, յուրաժամանակություն և ճշտապահություն, փոխկապակցվածություն  և համադրելիություն, մատչելիություն և պարզություն

STATISTICS DENMARK

# Ծախսարդյունավետ կերպով սպառողների կարիքների բավարարման ընթացքում մարտահրավերները

- Առկա աշխատանքային գործընթացները և մեթատվյալները
  - Ընդհատումներով և չստանդարտացված աշխատանքային գործընթացներ
  - Մեթատվյալներ կապված վերջնական տվյալների հետ, որոնք կրկին չեն օգտագործվում
  - Մեթատվյալների ընհատված և անկատար ներկայացում
  - Կոնցեպտային տվյալների բազաները ոչ լիարժեք
  - Դասակարգիչներ և կոդերի ցանկեր շատ տեղերում
- Ստանդարտների ներդրում
  - Վիճակագրական բիզնես գործընթացների ընդհանրական մոդել (GSBPM)
  - SIMS, SDMX (ESQRS և ESMS) Եվրոստատից
  - Տվյալներ ինտեգրացնող DDI և DDI-գործիքներ

# Մեթատվյալների և որակի հաշվետվողականության ռացիոնալացում և ներդաշնակեցում

- Մեկանգամյա հաշվետվություն բոլոր նպատակների համար
  - Յուրաքանչյուր կոնցեպտ զեկուցվում է միայն մեկ անգամ և վերաօգտագործվում է
- Ամբողջացված և համահունչ որակ և մեթատվյալներ
  - Հաշվետու շրջանակ, որտեղ հաշվետվությունները գտնվում են նույն տվյալների բազայում
- Ճկուն և թարմացված համակարգ
  - Որտեղ հնարավոր է ապագայում նոր կոնցեպտներ ավելացնել
- Մեթատվյալների ամբողջացված եզակի համակարգ (SIMS)
  - Ստեղծվել է Եվրոպական վիճակագրական համակարգի/ESS մեթատվյալների վիճակագրական կոնցեպտների դինամիկ և յուրօրինակ գույքագուցակ
- Սույն կառուցվածքում երկու ESS հաշվետվողական կառուցվածքների (ESMS և ESQRS) բոլոր վիճակագրական կոնցեպտները ներառվել և ռացիոնալացվել են դրանց զեկուցումը դարձնելով մեկանգամյա

# Վիճակագրության փաստաթղթավորում

- ESS ձեռնարկին հաջորդած վերակազմակերպումը 2014թ.-ին
- Երեք մակարդակներ
  1. “Գլխավոր էջ” որ հայտնվում է Դանիայի վիճակագրության կայք էջում, կառուցվածքում նշված 9 կարճ խորագրերով. Այստեղից հնարավոր է բացել 100 կոնկրետ թեմաներ (SIMS)
  2. SIMS-ի թեմաներն ընդգրկում են առավել մանրամասն եռամսյակային հաշվետվություն (տես Հավելված 2-ի ուղեցույցները): 2-րդ մակարդակից կարելի է բացել հավելվածներ մանրամասն նկարագրության համար
  3. Հավելվածներ
- Սրա գաղափարն է մեկ արտադրանքում ընդգրկել բոլոր հաճախորդներին (ազգային, միջազգային, ԵՄ)
- Պատրաստված դանիերեն և անգլերեն լեզուներով

# Մեկնարկային կետ որակի զեկույցների համար

- Մեկնարկային կետը փորձառության օրենսգիրքը և ն ESS որակի ապահովմն շրջանակն է:
- Ցուցանիշ 4.3 - որակի զեկուցում
  - Ցուցանիշ 15.5 – մեթատվյալները փաստաթղթավորվում են համաձայն մեթատվյալների ստանդարտացված համակարգերի
- Ստանդարտներ.
  - SIMS
  - ESQR
  - ESMS
  - GSBPM

# Վիճակագրության փաստաթղթավորում

- Ցիկլ.
  - Վիճակագրության յուրաքանչյուր տարածմանը հաջորդում է արդիականացված որակի հռչակագիր
  - Ուղարկվում է որակի ապահովման բաժին
  - Որակի ապահովման բաժինը կարդում և մեկնաբանում է դրանք
  - Տարածման կենտրոնը կարդում և մեկնաբանում է “առաջին էջերը”
  - Պատասխանատու թարմացումներ – նոր որակի ապահովում
  - Պատրաստ տարածման համար

# Վիճակագրության փաստաթղթավորման ցիկլը



# Վիճակագրության փաստաթղթավորումը www.dst.dk կայքում



Մուտք SIMS դաշտեր



Հրապարակում [www.dst.dk](http://www.dst.dk) կայքում




ՄԵԹԱՏՎՅԱԼՆ
ԵՐ
COLECTICA-ում

Որակի զեկույցի ուղարկում ԵՄ



Հրապարակում ինտերնետում



# Որակի աուդիտներ

- Դանիայի վիճակագրությունում սկսվեց 2015թ.
- Աուդիտ հիմնված CoP-ի վրա
- Փորձագետների թիմ
- Ինքնագնահատում
- Փաստաթղթավորման գննություն
- Զեկույց
- Գործողությունների ցանկ
- 2016թ.-ին նվազագույնը 6 վիճակագրություն



# Ինքնագնահատումը Դանիայի վիճակագրությունում

- Հիմքը CoP-ն է
- 4-րդ սկզբունքից յուրաքանչյուր ցուցանիշ գնահատվում է
- QAF-ն օգտագործվում է մեկանգամյա վիճակագրության մակարդակի վրա ոգեշնչման համար
- Պահանջները բավարարելու աստիճանը
  - A – Պահանջների մեծ մասը իրականացված է, ներառյալ փաստաթղթավորումը
  - B – Պահանջների մեծ մասը իրականացված է, բայց որոշ բացթողումներ կան դեռ
  - C – Պահանջների փոքր մասն է միայն բավարարված, շատ բացթողումներ կան
  - X – նպատակային չէս

# Գնահատման հանդիպում աուդիտի համար

- GSBPM-ը օգտագործվում է որպես շրջանակ հարցեր ուղղելու վիճակագրության արտադրման վերաբերյալ
- Մեկնարկային կետը միշտ սպառողներն են. ովքեր են նրանք
- …և հաջորդը՝ ինչպես են նրանց կարիքները բավարարվում
- Անցում է արվում GSBPM-ի բոլոր 8 փուլերով՝ փորձելով տեսնել վիճակագրության ստեղծման պատմությունը

# Աուդիտի հաշվետվություն

- Աուդիտի հաշվետվություններն ամփոփում են ինքնագնահատման ուժեղ և թույլ կողմերը
- Նկարագրվում է արտադրման գործընթացը
- Ինքնագնահատման և արտադրման գնահատման հիման վրա ներկայացվում են բարելավման առաջարկություններ
- Սրա հիման վրա գործողությունների ծրագիր է կազմվում վիճակագրական բաժնի կողմից
- Այնուհետև հաշվետվությունը և գործողությունների ծրագիրը տրվում են ղեկավարությանը

# Հիմնական ռեգիստրները Դանիայի վիճակագրությունում

- Նույնականացման համընդհանուր թվեր
- Չափազանց հարուստ տվյալներ
- Տվյալների բարձր որակ
- Համադրում և կապի հաստատում
- Երկայնական ուսումնասիրություններ

# Հիմնական ռեգիստրներ. Վիճակագրական համակարգ

